ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՄԵԼԻՆԵ ՄԱՆՈՒՇՅԱՆԻՆ

Բանալի բառեր *– Աշոտ Հովհաննիսյան, Մելինե Մանուշյան, Ֆրանսիա, Փարիզ, Երևան, հայրենիք, նամակ, ընկերուհիներ, ժամկետ, վերադառնալ, ուղարկել*

Ֆրանսիայի ազգային հերոս, ֆրանսիական Դիմադրության շարժման ակտիվ մասնակից, բանաստեղծ Միսաք Մանուշյանի (1906-1944) այրին՝ Մելինե Մանուշյանը (1913-1989)[1], որը ևս մասնակցել է ֆաշիստների դեմ ֆրանսիական ազատագրական շարժմանը, հետպատերազմյան շրջանում տեղափոխվել է Խորհրդային Հայաստան, ընդունել քաղաքացիություն, բնակություն հաստատել Երևանում և աշխատանքի անցել ՀԽՍՀ ԳԱ գրականության ինստիտուտում: 1960-ական թվականների սկզբին նա մի քանի ամսով մեկնում էր Ֆրանսիա, այցելում Փարիզում բնակվող իր քրոջը: 1963 թ. նա կրկին Ֆրանսիա մեկնեց և այլևս չվերադարձավ:

Մ. Մանուշյանի՝ Փարիզում մնալու ժամկետի երկարաձգումը Հայաստանում տեղիք տվեց մտահոգությունների, ուստի ոմանք սկսեցին կարծել, որ նա, հավանաբար, ցանկություն չունի հայրենիք վերադառնալու, և Երևանում լուրեր տարածվեցին Ֆրանսիայում մշտական բնակություն հաստատելու նրա ցանկության մասին: Այս առնչությամբ նրա ընկերուհիների և գործընկերների շրջանում պարբերաբար տեղի էին ունենում երկարատև ու տհաճ զրույցներ. ոմանք կասկածում էին, որ նա կվերադառնա Խորհրդային Հայաստան, չնայած ընկերուհիներին հասցեագրած նամակներից մեկում նրա՝ հայրենիք վերադառնալու խոստումներին:

Մելինե Մանուշյանին առնչվող այս խոսակցությունները մտահոգություններ առաջացրին նաև նրա ավագ գործընկերոջ՝ ականավոր պատմաբան Աշոտ Հովհաննիսյանի (1887-1972) և նրա տիկնոջ՝ հայտնի քանդակագործ Այծեմիկ Ուրարտուի (1899-1974) մոտ, որոնց հետ մինչ այդ նա բարեկամական փոխհարաբերություններ ուներ և պարբերաբար այցելում էր նրանց: Այս պայմաններում, Մ. Մանուշյանին մեծ հարգանքով վերաբերվող Ա. Հովհաննիսյանը, ելնելով նրա իսկ շահերից, վճռեց նրան նամակ հղել՝ հայրենիք վերադառնալու կոչով:

Սույն նամակի ձեռագիր տարբերակը գտնվում է հանգուցյալ մորս՝ Մարգո Մխիթարյանի (1920-2001)՝ Մելինե Մանուշյանի մտերիմ ընկերուհու,

---

[1] Տե՛ս նրա գիրքը ամուսնու մասին՝ **Manouchian M**., Manouchian, Paris, 1974:

իմ բնակարանում պահվող թղթապանակներից մեկում: Ի դեպ, այդ նամակի ծրարի վրա Ա. Հովհաննիսյանի ձեռագրով նշված է. «Փարիզ ընկեր Մելինե Մանուշյանին»: Կարելի է ենթադրել, որ հավանաբար նրան ուղարկվել է Ա. Հովհաննիսյանի սույն նամակի մեքենագիր տարբերակը:

Հայրենիք վերադառնալուն առնչվող Ա. Հովհաննիսյանի՝ Մ. Մանուշյանին ուղղված այս նամակը, փաստորեն, այսօր ևս, ցավոք, պահպանել է իր այժմեականությունը, ուստի այն նպատակահարմար գտանք ներկայացնելու մեր հանդեսի ընթերցողներին:

ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Սիրելի Մելինե!

Աշխատանքի մեջ խրված՝ հնարավորություն չունեմ երկար նամակ գրելու քեզ: Ինքդ էլ հազիվ թե ակնկալություն ունես նամակ ստանալու ինձնից, քանի որ այսքան ամիսների միջոցին ժամանակ չգտար երկտող հղելու մեզ:

Այս տողերը գրում եմ, օգտվելով ընկ. Մուսայել Քոչարյանի[1] պատրաստակամությունից՝ քեզ հասցնելու գրածս:

Ինձ և Այծիկին անհանգստացնում է չափից ավելի երկար տևող քո դեգերումը Փարիզում:

Չեմ ուզում թաքցնել քեզնից տհաճ այն շշուկները, թե իբր հրաժարվում ես հայրենիք վերադառնալ:

Մեզ համար սա ոչ միայն անհավատալի է, այլև համոզված ենք, որ հերյուրված է Փարիզի կամ Երևանի քեզ անբարյացակամ մարդկանց կողմից, որոնք գիտեն, որ ազնիվ հայրենասերի համար չկա և չի կարող լինել ավելի անարգ բան, քան անվերադարձի սև պիտակը:

Այստեղ տեղեկություն է հասել այն մասին, թե Փարիզը [Փարիզում – *Վ. Պ.*] մեր դեսպանությունը երկարաձգել է Ֆրանսիայում մնալու քո ժամկետը մինչև հունվար: Իմ կարծիքով, դու պիտի վերադառնաս Երևան ավելի կանուխ, քան կը լրա[նա] քեզ տրված ժամկետը: Դրանով արած կը լինես մի քայլ, որ անհարմար վիճակի մեջ կը դնի քեզ բամբասողներին:

Ընդունիր մեր կողմից ջերմագին ողջույններ և համբույրներ:

Քո Աշոտ Հովհաննիսյան

1964.X.13
Երևան

---

[1] Մուսայել Քոչարյանը (1920-1996) հայտնի պետական գործիչ էր, 1959-1970 թթ. ՀԿԿ Երևանի Սպանդարյանի շրջկոմի առաջին քարտուղարը: Նա նաև փիլիսոփայական գիտությունների դոկտոր էր և 1970-1975 թթ. եղել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի ռեկտորը:

Варужан Погосян – ***Письмо Ашота Иоаннисяна Мелине Манушян***

После Второй мировой войны Мелине Манушян, вдова Мисака Манушяна, покинула Францию и обосновалась в Ереване, поступив на работу в Институт литературы АН АрмССР. В начале 1960-х годов она на несколько месяцев уезжала в Париж, к своей родной сестре. В 1964 г., находясь в Париже, она не изъявляла особого желания вернуться в Армению, о чем знали многие. И потому выдающийся армянский историк А.Г. Иоаннисян письменно обратился к ней с вопросом о необходимости возвращения на Родину, в Советскую Армению, хотя она никакого внимания не обратила на его предложение.

Varoujean Poghosyan – ***The Letter of Ashot Hovhannisyan to Meline Manushyan***

After World War II, Meline Manushyan, the widow of Misak Manushyan, left France, settled in Yerevan and started to work at the Institute of Literature of the ASSR Academy of Sciences. In the early 1960s, she left for Paris for several months to visit her sister. In 1964, while in Paris, she did not have any particular desire to return to Armenia, and many people knew about it. That is why the outstanding Armenian historian A. G. Hovhannisyan wrote to her with a request to return to her homeland, to Soviet Armenia, although she did not pay any attention to his proposal.

Ներկայացվել է 27.08.2019
Գրախոսվել է 03.10.2019
Ընդունվել է տպագրության 05.11.2019